Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2024. «Ծաղկաձոր համայնքում արտակարգ իրավիճակների համար օժանդակ տրանսպորտային միջոցի տրամադրման ծրագրի» ստորագրման արարողություն

Երևան՝ 9 մարտի, 2026թ.

Մարտի 9-ին Մեղրաձոր գյուղի փրկարարական հենակետում տեղի ունեցավ «Ծաղկաձոր համայնքում արտակարգ իրավիճակների համար օժանդակ տրանսպորտային միջոցի տրամադրման» (մինչև 50,570 ԱՄՆ դոլար) ծրագրի դրամաշնորհային աջակցության ստորագրման արարողությունը: Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Առկի Յուտական, Կոտայքի մարզպետ պարոն Ահարոն Սահակյանը, Ծաղկաձորի համայնքապետ պարոն Նարեկ Հարությունյանը, Մեղրաձորի վարչական ղեկավար պարոն Վորոդյա Հովհաննիսյանը և «Սպիտակի Հուսո Լույս» ՀԿ-ի նախագահ տիկին Մարինե Թադևոսյանը, ինչպես նաև փրկարարական անձնակազմը և Մեղրաձոր գյուղի բնակիչները:

Այս ծրագիրը նպատակ ունի ապահովել արտակարգ իրավիճակների ծառայությունների հասանելիությունը՝ լուծելով ձմռանը առատ ձյան պատճառով առաջացած ճանապարհային խցանումները, ինչպես նաև ամռանը հաճախակի տեղի ունեցող անտառային հրդեհների դեմ արագ արձագանքման կարողությունները էլ ավելի ամրապնդելով՝ հատկացնելով ձյուն մաքրող սարքավորումով հագեցած Ճապոնական ամենագնաց արտակարգ իրավիճակների օժանդակ տրանսպորտային միջոց: Ծրագիրը կնպաստի Ծաղկաձոր համայնքի 22,000 բնակիչների, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված 7,000 անձանց համար անվտանգ կենսապայմանների ապահովմանը: Այս տարածաշրջանում ճանապարհային խցանումներ հաճախ են առաջանում, երբ ձմռանը ձյան շերտը գերազանցում է մեկ մետրը, և դա լրջորեն սահմանափակում է արտակարգ տրանսպորտային միջոցների հասանելիությունը մեկուսացված տնային տնտեսություններին: Բացի այդ, ամռանը հաճախակի անտառային հրդեհների պայմաններում արտակարգ տրանսպորտային միջոցների պակասը հանգեցրել է դեպքի վայր ժամանելու և հրդեհաշիջման գործողությունների իրականացման ուշացումների, ինչը հանգեցրել է ավելի մեծ վնասների. հետևաբար, այս հանգամանքները ստեղծել են աջակցության պահանջ:

«Սպիտակի Հուսո Լույս»-ի նախագահ տիկին Թադևոսյանը արարողության ժամանակ երախտագիտություն հայտնեց՝ նշելով. «Այս նախագիծը Ճապոնիայի և Հայաստանի միջև տնտեսական համագործակցության խորհրդանիշ է: Մենք պատասխանատու կերպով կկառավարենք և կօգտագործենք տրամադրված սարքավորումները՝ ստեղծելով այնպիսի միջավայր, որտեղ բնակիչները կարող են ապրել հոգեկան խաղաղությամբ. զգալով իրենց պաշտպանված այս տարածաշրջանում բնական աղետների սպառնալիքներից»: Շնորհավորական խոսք ասաց նաև դեսպան Առկի Յուտական՝ նշելով. «Ես ուրախ եմ, որ մեկ տարի առաջ մեր աջակցությամբ այս փրկարարական բազան ստեղծվեց, իսկ այժմ նաև արտակարգ իրավիճակների տրանսպորտային միջոց տրամադրելով, էլ ավելի է ամրապնդվում համայնքի արտակարգ իրավիճակներին արձագանքման կարողությունները: Հուսով եմ, որ մեքենան կօգտագործվի հրշեջների արագ տեղափոխման և ձմռանը ճանապարհներից ձյուն մաքրելու համար, ինչպես նաև կապահովի այս տարածաշրջանի բնակիչների կյանքն ու անվտանգությունը երկար տարիներ»:

Ստորագրման արարողություն

Ստորագրման արարողություն

Կոտայքի մարզի մարզպետ պարոն Սահակյանը իր երախտիքի խոսքն ուղղեց դեսպան Առկիին

«Ծաղկաձորում անտառային հրդեհների դիմադրողականության բարձրացման» ծրագրի շրջանակներում ստեղծված փրկարարական հենակետը